ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2026-11-12 10:28:46

Հայտատու	Թումանյանի համայնքապետարան
Տեսակ	Հանրային ծանուցումներ
Հիմք	«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդված

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի /03.05.2023թ. ՀՕ 150-Ն/ և ՀՀ կառավարության 19.11.2014թ. <<Հանրային ծանուցմամբ և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին>> N 1325-ն որոշմամբ սահմանված կարգով / խմբագրվել է ՀՀ կառավարության 28.12.2023թ. թիվ 2343-Ն որոշմամբ/ 2026 թվականի դեկտեմբերի 15-ին ժամը 1200 -ին Թումանյանի համայնքապետարանում (հասցեն՝ ք.Թումանյան, Կենտրոնական
1) տեղի կունենա «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I-III (Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ)» Թումանյան համայնքին (բնակավայրեր՝ Աթան,Շամուտ,Լորուտ,Ահնիձոր,Մարց, Դսեղ,Չկալով) առնչվող օդային էլեկտրահաղորդման գծերի և դրանց կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ մոտեցման ճանապարհների կառուցման աշխատանքների իրականացմանը նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու նպատակով առաջին հանրային լսում: Շահագրգիռ հանրության կողմից առաջարկությունները, դիտողությունները և կարծիքները կարող են ներկայացվել բանավոր՝ հանրային լսման ընթացքում, ինչպես նաև գրավոր կամ էլեկտրոնային եղանակով՝ հանրային ծանուցումից հետո 20 աշխատանքային օրվա ընթացքում:Հանրային լսման կազմակերպման և անցկացման համար պատասխանատու (վարող) նշանակել Թումանյան համայնքի ղեկավարի տեղակալ Արմեն Չոփուրյանին / էլ. փոստ՝ tumanyan.city@mail.ru, հեռ.՝ +374-94868315/:

37494720960

tumanyan.city@mail.ru

ԹՈՒՄԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ 1